ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՃՅՈՒՂԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ПРОФСОЮЗ РАБОТНИКОВ ГОСУЧРЕЖДЕНИЙ АРМЕНИИ

UNION OF STATE, LOCAL GOVERNMENT AND PUBLIC SERVICE EMPLOYEES OF ARMENIA

«2» ապրիլի 2024թ.
N 27-01

ՀՀ առողջապահական և աշխատանքի

տեսչական մարմնի ղեկավար

Ս. Սարգսյանին

Հարգելի պարոն Սարգսյան

ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի Հայաստանի պետհիմնարկների, ՏԻՄ-երի աշխատողներ արհմիությանն ուղղված 2024թ մարտի 25-ի թիվ 16/6439-2024 գրությամբ (*փետրվարի 12-ին հարուցված թիվ 120224-165 վարչական վարույթ*) տեղեկացանք իրականացրած գործողությունների մասին: Շնորհակալ ենք կատարած աշխատանքի համար:

Միևնույն ժամանակ ուզում ենք Ձեզ տեղեկացնել, որ չնայած մարմնի աշխատակիցներին հաջողվել է հայտնաբերել, որ [redacted] առանց աշխատանքային պայմանագրի աշխատել է դեկտեմբերի 05-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 29-ը, բայց մեզ դիմած օտարերկրյա քաղաքացիների պնդմամբ, ոչ միայն գրության մեջ նշված [redacted]ը, այլևս 15 (տասնհինգ) մարդ «Հովսեփյանների պահածոնների կոմբինատ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունում առանց աշխատանքային պայմանագրի աշխատել են **2023թ. հունիսից մինչև 2024թ. փետրվարի 11-ը**: Փաստորեն, այս իրողությունը տնտեսվարողը բարեհաջող կերպով թաքցրել է Տեսչական մարմնից թե՛ 2023թ օգոստոսին հարուցված թիվ 210823-2125 վարույթի, թե՛ ներկայիս վարույթի ընթացքում (*2023թ. օգոստոսին Տեսչական մարմնին ներկայացված դիմումը նույնպես վերաբերվել է [redacted] և նրա հետ աշխատող շուրջ 20 օտարերկրյա քաղաքացիներին, սակայն Տեսչական մարմնին հաջողվել էր բացահայտել միայն երկու առանց պայմանագիր աշխատողի*):

Հասցե՝ 0010, ք. Երևան
Վ. Սարգսյան 26/3, 501 ս.

Address: 26/3 V. Sargsyan st,
Office 501, Yerevan, 0010

Адрес: 0010, г. Ереван
ул. В. Саргсяна 26/3, офис 501

Tel: +37410580582 URL: www.arhmiutyun.org Email: profrosgu@gmail.com Facebook: facebook.com/arhmiut

Ավելին, [redacted] և նրա հետ աշխատող անձանց կողմից ստացված տեղեկատվության համաձայն, 2024թ. փետրվարի 11-ին թե՛ նա, և թե՛ 15 այլ օտարերկրյա քաղաքացիներն ազատվել են «Հովսեփյանների պահածոնների կոմբինատ» ՍՊԸ-ում աշխատանքից, այն հիմնավորմամբ, որ Տեսչական մարմնին բողոք է ներկայացվել: Ընդ որում, նշված 16 աշխատողները 2023թ դեկտեմբերից մինչև 2024թ փետրվարի 11-ի ժամանակահատվածի համար այդպես էլ չեն վարձատրվել:

Վերոնշվածը վկայում է նրա մասին ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի լիազորությունները բավարար չեն նման խնդիրները արձանագրելու համար:

Առաջարկում ենք նախաձեռնել օրենսդրական փոփոխություններ, որը հնարավորություն կտա Տեսչական մարմնին ստուգումներ կատարելու առանց նախապես զգուշացնելու՝ մանավանդ այն տնտեսվարողների մոտ, որտեղից արդեն եղել են խախտումների մասին ահազանգեր:

Հարգանքով՝
Հայաստանի պետհիմնարկների,
ՏԻՄ-երի աշխատողների ճյուղային
արհմիության նախագահ **Ա. Ասատրյան**